



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Վայոց ձոր մարզի Քարագլխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Աշխարհագրություն

Թեմա՝ Նախագծահեն ուսուցման մեթոդի արդյունավետությունը աշխարհագրության դասավանդման մեջ

Վերապատրաստող, մենթոր՝ Հայկուհի Թովմասյան

Ուսուցիչ՝ Քրիստինե Ղազարյան

Երևան 2023

Թեմա՝ Նախագծահեն ուսուցման մեթոդի արդյունավետությունը  
աշխարհագրության դասավանդման մեջ

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ	3
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	5
ՓՈՐՁԱՌՈՒ ԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆ	11
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ	15
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ	16

# ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ

**«Տեխնոլոգիաների և ծախսերի կորուստի գնահատման մասին»:**

## **ԱՆՈՒՄ**

Կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում մեծանում են աշակերտների ակտիվ մասնակցությունը և ինքնուրույնությունը սովորելու գործընթացում: Այս մոտեցումը նոր պահանջներ է դնում ուսուցչի առջև՝ դասընթացի անցկացման, նպատակների և կրթական արդյունքների ձևակերպման համար: Դասավանդվող նյութի հեշտ յուրացումը աշակերտների կողմից կախված է ոչ միայն նրանց ընդունակություններից, այլև դասավանդման մեթոդներից: Կրթական վերջնարդյունքի յուրաքանչյուր տեսակ առավել արդյունավետ է ձեռք բերվում դասավանդման որոշակի ձևերի ու մեթոդների կիրառմամբ:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու և կրթության նպատակներն իրականացնելու համար նպատակահարմար մեթոդ է հանդիսանում նախագծահեն ուսուցումը: Այս մեթոդը ապահովում է ուսումնական գործընթացի որակը և դասավանդման գործընթացի արդյունավետությունը, ինչպես նաև հանդիսանում է աշակերտակենտրոն ուսուցման տարր:

Նախագծահեն ուսուցումը հնարավորություն է տալիս ստեղծել պայմաններ, որոնց շնորհիվ աշակերտները ինքնուրույն ձեռք են բերում գիտելիքներ տարբեր աղբյուրներից, սովորում օգտվել ձեռք բերված տեղեկատվությունից, զարգացնում հետազոտական ունակությունները և հաղորդակցման կարողությունները՝ խնդիրների բացահայտման, տվյալների հավաքագրման, դիտարկման, վերլուծության, համադրման միջոցներով, որի արդյունքում էլ ունենում են համակարգված մտածողություն:

Նախագծային մեթոդը չի սահմանափակվում դասարանային պարապմունքներով, այս մեթոդը թույլ է տալիս աշակերտներին դուրս գալ դասարանի սահմաններից և կազմել սեփական գործողությունների նախագիծ՝ քննարկվող թեմայի շուրջ: Նախագծահեն ուսուցման ընթացքում օգտագործվում են տեղեկատվության տարբեր աղբյուրներ, այդ թվում՝ գիտական գրականություն, տարբեր տեսակի փաստաթղթեր, վիճակագրական հրապարակումներ և այլն:

Նախագծահեն ուսուցման մեթոդը հնարավորություն է տալիս գիտելիքը դարձնել կիրառելի:

Նախագծային աշխատանքը այնպիսի մոտեցում է, որը նպաստում է հմտությունների, գիտելիքի և քննադատական ընկալման համադրության յուրացմանը, ինչպես նաև արժեքների ձևավորմանը:

Աշակերտի դերը նախագծային աշխատանքում էապես տարբերվում է: Պասիվ լսողից նա դառնում է ակտիվ, հետազոտող, գործունեություն

ծավալող մասնակից: Աշակերտներն ազատ են գործունեության ձևի ու տեսակի ընտրության մեջ, որն էլ զարգացնում է նրանց մոտ ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային աշխատանք կազմակերպելու հմտություն:

Նախագծահեն ուսուցումը աշակերտներին թույլ է տալիս կատարել խնդրի առաջադրում, տեղեկատվության որոնում, գիտելիքների օգտագործում ըստ նշանակության, վերլուծություն, ինքնաներկայացում, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծագործական գործունեություն:

Չետագոտական աշխատանքի հիմնական նպատակն է աշակերտների՝

- դիտելու, ուսումնասիրելու հմտությունների ձևավորում և զարգացում իրական գործունեության միջոցով,

- եզրակացություններ անելու նախնական կարողությունների ձևավորում: Չետագոտական աշխատանքի խնդրիներն են՝

- ուսումնական այլ խնդիրների լուծում, ուսումնական նյութերի ստեղծում,

- աշխատանքային պլանի ճիշտ կազմակերպում,

- վկայությունների հավաքագրում,

- ճիշտ մեդիատեխնոլոգիաների ընտրություն:

## ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մարդու հաջողությունները մեծ մասամբ որոշվում են իր կյանքը որպես նախագիծ կազմակերպելու ընդունակությամբ. որոշել հեռավոր և ամենամոտ հեռանկարները, գտնել և յուրացնել անհրաժեշտ ռեսուրսները, փոխել գործունեության պլանը և իրականացնելով այն գնահատել՝ թե արդյո՞ք հաջողվել է հասնել դրված նպատակին: Աշխարհի մասշտաբով կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ժամանակակից քաղաքականության, սպորտի, բիզնեսի, արվեստի առաջատարների մեծ մասն ունեն նախագծային մտածողություն [\[2\]](#): Այսօր դպրոցում առկա են բոլոր հնարավորությունները մտածողության այս ձևի զարգացման համար, որն իրականացվում է սովորողների գործունեության հատուկ տեսակի՝ նախագծային գործունեության կազմակերպման միջոցով:

Նախագծերի մեթոդն իր նշանակությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում:

Նախագծերի մեթոդը ուսուցման համակարգ է, որի ընթացքում աշակերտները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում: Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նոր երևույթ չէ:

Այն առաջին անգամ նկարագրվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ ում կրթական բարեփոխումների շրջանում, ինչի արդյունքում կրթությունը դարձավ աշակերտակենտրոն: Հետագայում այն լայն տարածում ստացավ եվրոպական երկրներում: Մեթոդի ի հայտ գալը կապվում է Ջոն Դյուլիի անվան հետ, երբեմն անվանում են նաև հիմնախնդիրների մեթոդ:

Դյուլին առաջարկում էր ուսուցման հիմքում դնել սովորողի ակտիվությունը՝ հիմնվելով սովորողի նպատակային գործունեության և անհատական հետաքրքրությունների վրա: Կարևոր է սովորողներին ցույց տալ իրենց անձնական շահագրգռվածությունը գիտելիք ստանալու գործընթացում. գիտելիք, որը կարող է և պետք է կիրառվի կյանքում: Ուսուցիչը կարող է հուշել տեղեկատվության նոր աղբյուրներ կամ պարզապես անհրաժեշտ ուղղությամբ տանել աշակերտի միտքը:

Արդյունքում սովորողները պետք է ինքնուրույն, համատեղ ջանքերով հաղթահարեն դժվարությունը՝ օգտագործելով տարբեր առարկաներից համապատասխան գիտելիքը, հմտությունը՝ անհրաժեշտ արդյունք ստանալու համար: Դյուլին գրում է. «Երեխան կրկնում է մարդկության ճանաչողության ուղին, գիտելիքի յուրացումը սպոնտան, անկառավարելի գործընթաց է. երեխան յուրացնում է նյութը ոչ թե լսելով կամ ընկալելով զգայական համակարգով, այլ երբ զգում է այդ գիտելիքի կարիքը և յուրացման գործընթացի ակտիվ մասնակից է»:

Դյուլին կրթության հաջողության գրավական է համարում.



◆Ուսումնական նյութի պրոբլեմականացումը

◆Երեխայի ակտիվությունը

◆Կրթության կապը երեխայի կյանքի, խաղի, աշխատանքի հետ [\[4\]](#):

Նախագծերի մեթոդն իր նշանակությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսումնական գործունեությունը, աշակերտներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում, տեխնոլոգիա է, որը ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ: Նախագծային մեթոդի առանձնահատկությունն այն է, որ ուսուցումը կազմակերպվում է աշակերտների նպատակային գործունեության միջոցով, ընդգծվում է կապը աշակերտների կյանքի և առօրյայի հետ, ուսումնասիրության հիմնախնդիրները բխում են իրական կյանքից: Այս դեպքում անպայման կապահովվեն աշակերտների հմտությունների, կարողությունների զարգացումը, տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու, քննադատական մտածողության զարգացումը: Փորձն ապացուցում է, որ նախագիծ մշակող և իրագործող սովորողները կարողանում են աշխատել խմբում, համագործակցել ընկերների հետ, կոնկրետ այս կամ այն խնդիրը լուծելու համար կիրառել տարբեր ոլորտներից ձեռք բերած իրենց

գիտելիքները [3]:

Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է աշակերտներին տալ հնարավորություն գործնական առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր աղբյուրներից գիտելիքների ինտեգրման միջոցով: Այս մեթոդի ընթացքում աշակերտները ակտիվորեն մասնակցում են ճանաչողական

գործընթացին՝ լուծելով ստեղծագործական, որոնողական խնդիրներ, մասնակիցները հայտնաբերում, բացահայտում են գաղափարներ, ինչպես նաև իրենց անձնային ռեսուրսները, հնարավոր առանձնահատկությունները:

Նախագծահեն ուսուցումն իր արդյունավետության շնորհիվ հնարավորություն է տալիս աշակերտների մոտ ձևավորել հմտություններ և զարգացնել կարողություններ, այստեղ առանձնացվում են փոխադարձ ուսուցանումը, հետազոտումը, անհատականացումն ու ինքնաուսուցանումը, ինքնավերահսկման և ինքնակարգավորման մեխանիզմը, մոտիվացիայի նոր տեսակների ակտիվացումը, ուսուցանվողների գիտումը գործունեության, գիտելիքների, կարողությունների յուրացման արդյունավետ միջոցներով:

Ներկա ժամանակներում միջին և ավագ դպրոցի խնդիրն է ոչ միայն սովորողների կրթության բարձր մակարդակի ապահովումը, այլև՝

նրանց մտածողության բազմակողմանի զարգացումը, իրենց գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և ժամանակակից գիտական տեղեկատվության Ֆոլկիանոսում՝ կողմնորոշվելու ունակությունը: Այս խնդիրը հատուկ նշանակություն է ձեռք բերում հատկապես բնագիտական շարքի առարկաների համար, քանի որ հենց այդ առարկաներն են զարգացնում սովորողի գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ ունակություններն ու կարողությունները:

Գոյություն ունեցող մանկավարժական փորձը հիմք է տալիս նախագծերը դասակարգելու հետևյալ կերպ.

- ◆ ըստ նախագծի մշակմանը մասնակցող աշակերտների թվի տարբերում են

անհատական կամ խմբային նախագծեր.

- ◆ ըստ բովանդակության՝ միառարկայական կամ միջառարկայական.

◆ ըստ նախագծային գործունեության շարունակականության՝ նախագծերը կարող են լինել կարճաժամկետ (1-2 պարապմունք), միջին ժամկետով (1ամիս) և երկարաժամկետ (1ամսից մինչև 1տարի).

◆ գերիշխող գործունեության ձևից կախված՝ տարբերում են. տեղեկատվական, հետազոտական, գործնական, հեռահաղորդակցական նախագծեր [\[2\]](#):

Նախագծահեն ուսուցումը սովորաբար կառուցվում է հետևյալ քայլերի հաջորդականությամբ.

◆ ուսումնասիրության թեմայի ընտրություն կամ բաց հարցի ընտրություն և

աշխատանքի պլանավորում.

◆ տեղեկատվության հավաքում, հավաքած տեղեկատվության կազմակերպում և որոշումների կայացում (ինչը ենթադրում է ինչպես անհատական պատասխանատվություն, այնպես էլ համագործակցություն խմբում և կարծիքների հնարավոր տարբերությունների կամ տարածայնությունների կառավարում).

◆ արդյունքի պատրաստում (որը կարող է լինել տարբեր ձևաչափերով, օրինակ՝

պլակատ, տեսանյութ, փաթեթ, տեքստ, ներկայացում կամ միջոցառում).

◆ արդյունքի ներկայացում.

◆ ուսումնառության փորձառության

մտազննում/հետադարձ հայացք [\[5\]](#): Տարբերում են

նախագծերի իրականացման հետևյալ փուլերը.

1) նախապատրաստական,

- 2) պլանավորման,
- 3) հետազոտման,
- 4) արդյունքների քննարկման,
- 5) գնահատման:

1) Նախապատրաստական փուլում հստակեցվում է աշխատանքի բովանդակությունը. որոշվում է նախագծի թեման և նպատակը, հիմնախնդրի ներկայացման ձևը: Սովորողները քննարկում են թեման ուսուցչի հետ և ստանում անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ, ապա դնում նպատակներ: Ուսուցիչը ծանոթացնում է սովորողներին նախագծային մեթոդի իմաստին ու պարզաբանում հետազոտության մեթոդները:

2) Պլանավորման փուլում ուսուցիչը կատարում է նախապատրաստական աշխատանք: Իր խնդիրներում ներառում է աշակերտների գիտելիքների հիման վրա առաջնային գաղափարների առաջադրումը, աշակերտների հակումների, հետաքրքրությունների և հնարավորությունների բացահայտումը, նախագծերի թեմաների առաջադրումը, վարկածների ու նպատակների ձևակերպումը, պլանի մշակումը, աշխատող խմբերի ձևավորումը, նախագծի ղեկավարի ընտրությունը:

Կարևոր պահ է ռեսուրսային ապահովվածությունը՝ համակարգչային սարքավորումների, առևտրի, վիդեո,

պատճենահանման տեխնիկայի տրամադրումը, գրադարանային սպասարկումը: Մասնակիցների պարտավորությունների բաշխումը կատարում են իրենք՝ աշակերտները՝ բաց քննարկմամբ: Ուսուցիչը նույնպես հայտնում է իր կարծիքը: Խիստ կարևոր է հենց սկզբից հստակ սահմանել նախագծի յուրաքանչյուր մասնակցի խնդիրն ու կատարելու ժամկետը:

- 1) Վերլուծական փուլում աշակերտները գտնում ու հավաքագրում են տեղեկություններ՝ օգտագործելով գրականության աղբյուրները, զանգվածային լրատվամիջոցները, համացանցը: Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը բևեռում է տեղեկատվության հավաքման այնպիսի մեթոդների վրա, ինչպիսիք են դիտարկումը, վիճակագրական հարցումները, փորձի իրականացումը:

Գրականության հետաշխատելու համար՝ առաջին փուլում ուսուցիչը սովորեցնում է սեղմագրման սկզբունքները: Աշակերտները յուրացնում են տեղեկատվության հավաքման հմտությունը, զարգացնում են տեղեկատվությունը համեմատելու, դասակարգելու, վերլուծելու և համեմատելու ընդունակությունը:

- 2) Արդյունքների ներկայացման և քննարկման (հաշվետվության) փուլում ընձեռվում է աշակերտներին նախագծի ներկայացման ձևի ընտրության ընթացքում առավելագույն ազատություն, որը կարող է կատարվել տարբեր ձևերով՝ բանավոր հաշվետվություն, բանավոր հաշվետվություն՝ նյութի ցուցադրումով, գրավոր հաշվետվություն: Սովորողները քննարկում են դրանք, իսկ ուսուցիչը լսում և

նպատակային հարցեր է առաջարկում կամ ելույթ ունենում՝ որպես սովորական մասնակից:

Նախագծային գործունեության վերջնական արդյունքը ներկայացվում է գեկուցման, համակարգչային ներկայացման, ցուցատախտակի համար պատրաստված հոդվածի ձևով: Արդյունքների և գործընթացի գնահատումը կատարվում է կոլեկտիվ քննարկման միջոցով: Ուսուցիչը գնահատում է սովորողների ջանքերը, նրանց ստեղծագործական ունակությունները, տեղեկատվական աղբյուրների օգտագործման որակը, աշխատանքի շարունակականության հնարավորությունները, հաշվետվության որակը:

- 1) Նախագծային աշխատանքը թույլ է տալիս յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների ու կարողությունների համալիր գնահատման:

Նախագծային աշխատանքի ստեղծագործական հաշվետվությունը կարելի է համարել ամփոփիչ ատեստացիա (քննություն): Այդ դեպքում ուսուցիչը յուրաքանչյուր աշխատանքի համար պետք է պատրաստի գրախոսական: Շնորհանդեսից հետո խիստ կարևոր է աշակերտների հետ քննարկել արդյունքները, նշել դրականը, քննարկել թերություններն ու նշել նախագծային աշխատանքները բարելավելու կապակցությամբ աշակերտների առաջարկները (ռեֆլեքսիայի սկզբունք) [\[2\]](#):

- 2) Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ ընդհանուր գործ կատարելիս սովորողներն էլ ավելի են մտերմանում,

փորձում են օգտակար լինել իրար, ընկերանում են, իրար ուսումնասիրում-բացահայտում են, իրարից սովորում են, գնահատում են «ընկերություն» կոչվածը, հասկանում են դրա առավելությունները: Մի խոսքով՝ նախագծի վրա աշխատելու ընթացքում առավել ցայտուն են դառնում սովորողի ունակությունները [\[1\]](#):

Այսպիսով՝ դպրոցականների նախագծային գործունեությունը՝ որպես ուսուցման մեթոդ, նրանց մեջ ստեղծում է կարևոր նախադրյալներ՝ ձևավորելու և զարգացնելու համար թե՛ առարկայական կարողությունները, թե՛ ընդհանուր ուսումնական կարողություններ: Նախագծային գործունեությունը նպաստում է կարողությունների հավաքածուով և ինքնուրույն աշխատելու փորձով օժտված, մտավոր գործունեության հնարքներին տիրապետող, և համագործակցելու պատրաստ աշակերտների մի նոր տեսակի



Արդյունքների ներկայացման փուլը ներառում է հետևյալ տարրերը.

Չափորոշիչներ	Միավորներ	Աշխատանքների արդյունքներ
Կողմնորոշում տեղեկատվության աղբյուրներում		Չափաքված է ամբողջ տեղեկատվությունը Չափաքված է քիչ տեղեկատվություն Տեղեկատվությունը թեմային չի առնչվում

Չատուկ հասկացությունների կիրառումն ու ճիշտ օգտագործումը		Թեմայում լավ է կողմնորոշվում Միջին մակարդակ Ցածր մակարդակ
---	--	--



<p>Մուլտիմեդիա - ներկայացում</p>		<p>Աշխատանքի ձևակերպումը նպաստում է ըմբռնմանը</p> <p>Աշխատանքի ձևակերպումը շեղում է բուն բովանդակությունից</p> <p>Օգտագործված են տեխնիկական միջոցներ</p>
<p>Նախագծի պաշտպանությունը (բանավոր ելույթը)</p>		<p>Չեկուցումը կարդացվում է սեղմագրով Չեկուցումը կարդացվում է առանց սեղմագրի օգտագործման</p> <p>Կիրթ խոսքի տիրապետում</p> <p>Ոչ կիրթ զեկուցման շարադրանք</p> <p>Չարցերին հեշտ պատասխանելու կարողություն, պատասխանների ճշգրտություն</p> <p>Ինքնատիրապետում, վստահություն, նյութի շարադրման հստակություն</p> <p>Նախագիծը պաշտպանելիս ոչ ճշգրիտ</p>

		վարքագիծ
--	--	----------

		Ժամանակաչափի չպահպանում
--	--	-------------------------

Չարկ է նշել, որ այս մեթոդը հնարավորություն տվեց համախմբել աշակերտներին մեկ նպատակի շուրջ, ձևավորեց աշխատասիրություն, և աշխատանքի արդյունքը ներկայացնելու կարողություն ու հմտություն: Երեխաներից յուրաքանչյուրը մեծ ոգևորությամբ ու պատասխանատվությամբ էր կատարում իրեն հասանելիք աշխատանքը: Նախագծային աշխատանքի կատարումը մեծ բավականություն պատճառեց մեր աշակերտներին:

## ԵՉՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ

Իմ փորձառությունից ելնելով կարող եմ ասել, որ նախագծային

աշխատանքը հետաքրքիր է, օգտակար և հեռանկարային, եթե ճիշտ է ընտրված թեման, ճիշտ է հաշվարկված ժամանակը: Նախագծային մեթոդի իրականացումն արդյունավետ եմ համարում, երբ խմբում կան 6-8 սովորող. այս դեպքում աշխատանքը վերահսկելի, կոնկրետ, նպատակային ու տեսանելի է: Այն ավորություն է տալիս ունենալու ստեղծագործ, որոնող աշակերտ և անընդհատ կարդացող-մտածող-սովորող ուսուցիչ: Սովորողի աշխատանքն ինքնին կարևոր է և գնահատելի, թափած ջանքը՝ ուշադրության արժանի: Աշխատանքի ընթացքում են սովորում. նախագծային աշխատանքը հենց սովորելու գործնական հնարավորություն է: Հնարավորություն, որը կարող է տանել դեպի նոր բացահայտում: Արդյունքում կարևորում եմ փաստարկված սեփական կարծիքը, անկեղծությունն ու կենդանի խոսքը, նյութերի գրագետ օգտագործումը (համապատասխան հղումներ, ծանոթագրություններ), փաստերի համադրման հմտությունը, այնպիսի նյութի ստեղծումը, որի շատ մասեր հայերեն թարգմանություն չեն ունեցել և թարգմանել է սովորողը: Արդյունքում կարևորվում է նաև աշխատանքի գրագետ, տեսանելի, ընթեռնելի ներկայացումը:

Նախագիծը, որպես կանոն, հանգեցնում է նյութական պրոդուկտի ստեղծման:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մովսիսյան Ն., Ուսուցման նախագծային մեթոդ, Մանկավարժական հանդես, 2013թ.
2. Նավասարդյան Ս., Սահակյան Լ., Նախագծային մեթոդը որպես սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, Մանկավարժություն, 2008 / 1 - 2
3. Սարգսյան Ե., Նախագծերը ուսուցման արդյունավետ միջոց, §Մխիթար Սեբաստացի՝ կրթահամալիր, Մանկավարժական հանդես, 2013թ.
4. Սարգսյան Մ., Նախագծային մեթոդ-ինքնարտահայտվելու հնարավորություն, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, Մանկավարժական հանդես, 2013թ.
5. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար կիրառական ուղեցույց, հատոր 3, Եվրոպայի խորհուրդի հ